



Anthem Blue Cross Cal MediConnect Plan (Medicare-Medicaid Plan) 2021թ. Ապահովագրված դեղերի ցանկ (Տեղեկատու)

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ՝ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏԵՂԱԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՅՆ ՊԼԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ:

Այս դեղաբանական տեղեկատու թարմացվել է 6/23/2021.-ին:

Ավելի թարմ տեղեկությունների կամ այլ հարցերի դեպքում
կապ հաստատեք մեզ հետ

1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY: 711)

օրը 24 ժամ, շաբաթը 7 օր

կամ այցելեք duals.anthem.com:



Anthem Blue Cross Cal MediConnect Plan (Medicare-Medicaid Plan)

2021թ. Ապահովագրված Դեղերի ցանկը (Դեղաբանական տեղեկատու)

Ներածություն

Այս փաստաթուղթը կոչվում է *Ապահովագրված դեղերի ցանկ*, (կոչվում է նաև Դեղերի ցանկ): Այնտեղ նկարագրվում է, թե որ դեղատոմսով և առանց դեղատոմսի դեղերը, ինչպես նաև բժշկական իրերն են ապահովագրում Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից: Դեղերի ցանկում նաև պատմվում է, արդյոք գոյություն ունեն որևէ հատուկ կանոններ կամ սահմանափակումներ որևէ դեղամիջոցների համար, որոնք ապահովագրվում են Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից: Հիմնական տերմինները և դրանց սահմանումները կարող եք գտնել *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Բովանդակություն

A. Պարզաբանումներ.....	3
B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ).....	5
B1. Ո՞ր դեղատոմսային դեղերն են ներկայացված <i>Ապահովագրված դեղերի ցանկում</i> : (<i>Ապահովագրված դեղերի ցանկը</i> կրճատ անվանում ենք «Դեղերի ցանկ»):.....	5
B2. Արդյոք երբևէ փոփոխվում է Դեղերի ցանկը:	6
B3. Ի՞նչ է կատարվում, եթե Դեղերի ցանկում փոփոխություն է տեղի ունենում:	7
B4. Արդյոք կան սահմանափակումներ կամ սահմանաչափեր դեղերի փոխհատուցման հետ կապված, կամ արդյոք պետք է գործողություններ ձեռնարկել՝ որոշակի դեղ ստանալու համար:.....	8
B5. Ինչպե՞ս իմանալ, թե արդյոք ձեր ուզած դեղը սահմանափակումներ ունի կամ արդյոք հարկավոր է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ դեղը ստանալու համար:	8
B6. Ի՞նչ տեղի կունենա, եթե մենք փոխենք որոշակի դեղերի հետ կապված մեր կանոնները (օրինակ՝ նախնական թույլտվությունը (հաստատումը), քանակական սահմանաչափերը և/կամ փուլային թերապիայի սահմանափակումները):	9
B7. Ինչպե՞ս գտնել դեղը Դեղերի ցանկում:	9
B8. Ի՞նչ անել, եթե Դեղերի ցանկում չկա ձեր ուզած դեղը:	9
B9. Ի՞նչ անել, եթե դուք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի նոր անդամ եք և չեք կարողանում գտնել ձեր դեղը Դեղերի ցանկում կամ այն ստանալու հետ կապված խնդիրներ ունեք:	10



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
 Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք duals.anthem.com:**

B10. Արդյո՞ք կարող եք խնդրել բացառություն կատարել ձեր դեղն ապահովագրելու համար:	11
B11. Ինչպե՞ս դիմել բացառություն ստանալու համար:	11
B12. Ինչքա՞ն ժամանակ կտևի բացառություն ստանալը:	11
B13. Որո՞նք են ոչ պատենտավորված/ջեներիկ դեղերը:	11
B14. Ի՞նչ բան է OTC դեղը:	12
B15. Արդյո՞ք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը փոխհատուցում է ոչ դեղորայքային առանց դեղատոմսի բաց թողնվող (OTC) ապրանքները:	12
B16. Ի՞նչ է համավճարը:	12
B17. Ի՞նչ են իրենցից ներկայացնում դեղի կարգերը:	12
C. Ապահովագրված դեղերի ցանկի ամփոփում.....	13
C1. Ըստ առողջական վիճակի խմբավորված դեղեր.....	14
D. Ապահովագրված դեղերի ցուցակ	122



A. Պարզաբանումներ

Սա այն Դեղերի ցանկն է, որից կարող են օգտվել Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի անդամները:

- ❖ Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը (**Medicare-Medicaid Plan**) առողջապահական ծրագիր է, որը պայմանագրեր ունի Medicare-ի և MediCal-ի հետ՝ երկու ծրագրերում ընդգրկված անդամներին նպաստներ տրամադրելու համար:
- ❖ Դուք միշտ կարող եք ստուգել Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի թարմացված Ապահովագրված դեղերի ցանկն առցանց՝ duals.anthem.com կայքում, կամ զանգահարելով **1-833-214-3606** հեռախոսահամարին (TTY: 711)՝ **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր**
- ❖ Կարող են կիրառվել սահմանաչափեր, համավճարներ և սահմանափակումներ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի Անդամների դեղատնային սպասարկման բաժին կամ կարդացեք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի *Անդամի ձեռնարկը*:

ՈՒՇԱԴԻՈՒԹՅՈՒՆ՝ Եթե դուք խոսում եք հայերեն լեզվով, լեզվական օգնության անվճար ծառայությունները հասանելի են ձեզ համար: Զանգահարեք **1-833-214-3606** (TTY: 711) հեռախոսահամարով՝ **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր**: Այս զանգն անվճար է:

Armenian

注意: 如果您使用中文, 您可以免費獲得語言援助服務。請致電 **1-833-214-3606** (TTY:711), 一週7天, 全天24小時。通話免費。

Chinese

تنبيه: إذا كنت تتحدث العربية، فإن خدمات المساعدة اللغوية تتوفر لك مجاناً. اتصل على الرقم **1-833-214-3606** (الهاتف النصي: 711) ساعة في اليوم، 7 أيام في الأسبوع. 24 وتكون المكالمة مجانية.

Arabic

توجه: اگر به زبان فارسی صحبت می کنید، خدمات کمک در زمینه زبان، به صورت رایگان، برای شما در دسترس می باشد. **24 ساعت شبانروز و 7 روز هفته** با شماره **1-833-214-3606** (TTY: 711) تماس بگیرید. این تماس رایگان می باشد.

Farsi

안내: 한국어를 사용할 경우 무료 언어 지원 서비스를 이용하실 수 있습니다. 주 7일 하루 24시간 언제든지 **1-833-214-3606** (TTY: 711) 번으로 전화하십시오. 통화료는 무료입니다.

Korean

ВНИМАНИЕ: если вы говорите по-русски, вам могут предоставить бесплатные услуги перевода. Звоните по тел. **1-833-214-3606** (TTY: 711) **24 часа в день, 7 дней в неделю**. Звонок бесплатный.

Russian

ATENCIÓN: Si usted habla español, tiene a su disposición servicios gratuitos de asistencia de idiomas. Llame al **1-833-214-3606** (TTY: 711), **las 24 horas del día, los 7 días de la semana**. La llamada es gratuita.

Spanish

សូមជ្រាប៖ ជួបសិនបើហកអុនកនិយាយភាសាខ្មែរ បសវាកម៍ជំនួយភាសា មានផ្តល់ជូនហកអុនកហយឥតគិតថ្លៃ។ សូមទូរសព្ទទមកបលម **1-833-214-3606** (TTY: 711) **24 ម៉ោងកន្លងមួយថ្ងៃ, 7 ថ្ងៃកន្លងមួយសប្តាហ៍** ទូរសព្ទទមកបលមបនៈគឺឥតគិតថ្លៃ។

Khmer



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ **1-833-214-3606** հեռախոսահամարով (TTY: 711), **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր**: Զանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք duals.anthem.com:

PAALALA: Kung nagsasalita ka ng Tagalog, magagamit mo nang walang bayad ang mga serbisyo ng tulong sa wika. Tumawag sa **1-833-214-3606** (TTY: **711**), **24 na oras sa isang araw, 7 araw sa isang linggo**. Libre ang tawag.

Tagalog

CHU Ý: Nếu quý vị nói Tiếng Việt, có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ, miễn phí, cho quý vị. Xin gọi số **1-833-214-3606** (TTY: **711**), **24 giờ mỗi ngày, 7 ngày mỗi tuần**. Cuộc gọi được miễn tính cước phí.

Vietnamese

- ❖ Այս փաստաթուղթը կարող էք ստանալ անվճար այլ լեզուներով և ձևաչափերով՝ խոշոր տպագիր, բրայլյան կամ աուդիո: Զանգահարեք **1-833-214-3606** (TTY. **711**), **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր**: Զանգն անվճար է:
- Երբ զանգահարեք, տեղեկացրեք մեզ՝ արդյոք ցանկանում եք, որ դա լինի մշտական կարգադրություն, թե ոչ: Դա նշանակում է, որ մենք ամեն տարի նույն փաստաթղթերը կուղարկենք ձեր պահանջած ձևաչափով և լեզվով:
- Դուք կարող եք նաև զանգահարել մեզ՝ մշտական կարգադրությունը փոխելու կամ չեղարկելու համար: Ձեր փաստաթղթերը կարող եք գտնել նաև առցանց՝ **duals.anthem.com** կայքում:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք **duals.anthem.com**:

B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Այստեղ դուք կգտնեք *Ապահովագրված դեղերի ցանկի* հետ կապված ձեր հարցերի պատասխանները: Դուք կարող եք կարդալ FAQ-ի բոլոր հարցերը կամ փնտրել որևէ հարց և նրա պատասխանը:

B1. Ո՞ր դեղատոմսային դեղերն են ներկայացված *Ապահովագրված դեղերի ցանկում*: (Ապահովագրված *դեղերի ցանկը* կրճատ անվանում ենք «Դեղերի ցանկ»:)

Դեղերի ցանկում նշված դեղերը ապահովագրվում են Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից: Դեղերը հասանելի են մեր դեղատների ցանցում: Դեղատունն ընդգրկվում է մեր ցանցում, եթե վերջինիս հետ ունենք մեզ հետ համագործակցելու և ձեզ ծառայության մատուցելու պայմանագիր: Այս դեղատները մենք անվանում ենք «ցանցային դեղատներ»:

- Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը կապահովագրի Դեղերի ցանկի բժշկական տեսանկյունից բոլոր անհրաժեշտ դեղերը, եթե՝
 - ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս նշանակող ասում է, որ դրանք ձեզ անհրաժեշտ են ապաքինվելու կամ առողջությունը պահպանելու համար, և
 - դուք լրացնում եք դեղատոմսը Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի ցանցային դեղատանը:
- Որոշ դեպքերում, դուք պետք է ինչ-որ գործողություն կատարեք՝ նախքան կկարողանաք դեղը ստանալ (տես B4 հարցը ստորև):

Դուք կարող եք տեսնել նաև մեր կողմից ապահովագրվող դեղերի թարմացված ցանկը [duals.anthem.com](https://www.duals.anthem.com) կայքում կամ զանգահարել Անդամների դեղատնային սպասարկման բաժին **1-833-214-3606** հեռախոսահամարով (TTY. 711)՝ **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր**:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք [duals.anthem.com](https://www.duals.anthem.com):

B2. Արդյո՞ք երբևէ փոփոխվում է Դեղերի ցանկը

Այո, և Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը փոփոխություններ կատարելիս պետք է հետևի Medicare-ի և Medicaid-ի կանոններին: Մենք կարող ենք տարվա ընթացքում դեղեր ավելացնել կամ հեռացնել Դեղերի ցանկում:

Մենք նաև կարող ենք փոխել դեղերի հետ կապված մեր կանոնները: Օրինակ՝ մենք կարող ենք՝

- Որոշել պահանջել կամ չպահանջել նախնական համաձայնություն դեղի համար: (Նախնական համաձայնությունը Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից ձեզ տրված թույլտվությունն է դեղորայքն ընդունելուց առաջ:)
- Ավելացնել կամ փոփոխել դեղերի քանակը, որը դուք կարող եք ստանալ (կոչվում է քանակական սահմանափակումներ):
- Ավելացնել կամ փոփոխել դեղամիջոցի հետ կապված փուլային թերապիայի սահմանափակումները: (Փուլային թերապիա նշանակում է, որ դուք պետք է փորձեք մի դեղամիջոց՝ նախքան մենք կապահովագրենք մեկ ուրիշը:)

Այս դեղերի կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տես B4 հարցը:

Եթե դուք ընդունում եք մի դեղ, որն ապահովագրվում էր **տարեսկզբին**, ապա սովորաբար մենք չենք հեռացնում կամ փոխում այդ դեղի փոխհատուցումը **տարվա ընթացքում**, մինչև՝

- շուկայում չհայտնվի նոր, ավելի էժան դեղամիջոց, որը նույնքան արդյունավետ կլինի, որքան Դեղերի ցանկում ընդգրկված դեղամիջոցն այս պահին, **կամ**
- պարզենք, որ դեղն անվտանգ չէ, **կամ**
- դեղը հանվել է շուկայից:

Ստորև բերված B3 և B6 հարցերն ավելի շատ տեղեկություն են տալիս այն մասին, թե ինչ է տեղի ունենում, երբ Դեղերի ցանկը փոխվում է:

- Դուք միշտ կարող եք առցանց ստուգել Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի թարմացված Դեղերի ցանկը duals.anthem.com կայքում:
- Դուք կարող եք նաև զանգահարել Անդամների դեղատնային սպասարկման բաժին՝ ընթացիկ Դեղերի ցանկին ծանոթանալու համար՝ **1-833-214-3606** հեռախոսահամարով (TTY. 711) **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:**



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք duals.anthem.com:**

B3. Ի՞նչ է տեղի ունենում, եթե Դեղերի ցանկում փոփոխություն է լինում:

Դեղերի ցանկում որոշ փոփոխություններ տեղի կունենան **անմիջապես**: Օրինակ՝

- **Նոր ջեներիկ (վերարտադրված) դեղ է հասնալի դառնում:** Երբեմն շուկայում հայտնվում է նոր ջեներիկ դեղ, որն ունենում է նույն ազդեցությունը, ինչ ընթացիկ Դեղերի ցանկի բրենդային դեղամիջոցը: Եթե դա տեղի ունենա, մենք կարող ենք հեռացնել բրենդային դեղամիջոցը և ավելացնել նոր ջեներիկը, բայց այս նոր դեղամիջոցի գինը կմնա նույնը: Երբ մենք ավելացնում ենք նոր ջեներիկ դեղ, մենք կարող ենք նաև որոշել ցանկում պահպանել բրենդային դեղամիջոցը, սակայն փոխել դրա ապահովագրման կանոնները կամ սահմանափակումները:
 - Հնարավոր է՝ մինչև այս փոփոխությունը կատարելը մենք ձեզ տեղյակ չպահենք այդ մասին, բայց ձեզ կտեղեկացնենք հատուկ փոփոխության մասին, երբ դա տեղի ունենա:
 - Դուք կամ ձեր բժիշկը կարող եք նաև դիմել՝ այդ փոփոխություններից բացառություն ստանալու համար: Մենք ձեզ ծանուցում կուղարկենք այն քայլերի մասին, որոնք կարող եք ձեռնարկել՝ բացառություն խնդրելու համար: Բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես B10 հարցը:
- **Դեղը հանվել է շուկայից:** Եթե Food and Drug Administration-ը (FDA, Սննդի և դեղորայքի վերահսկման վարչությունը), հայտարարում է, որ այն դեղը, որը դուք ընդունում եք, անվտանգ չէ, կամ դեղամիջոցը արտադրողը դեղը հանում է շուկայից, մենք այն անմիջապես հեռացնում ենք Դեղերի ցանկից: Եթե դուք ընդունում եք այդ դեղը, մենք ձեզ տեղյակ կպահենք: Խնդրում ենք կապ հաստատել ձեզ դեղատոմս նշանակող բժշկի հետ անմիջապես այս նամակը ստանալուն պես:

Մենք կարող ենք նաև այլ փոփոխություններ կատարել, որոնք կազդեն ձեր ընդունած դեղերի վրա: Մենք նախապես կտեղեկացնենք ձեզ Դեղերի ցանկում կատարված այլ փոփոխությունների մասին: Այս փոփոխությունները կարող են տեղի ունենալ, եթե՝

- FDA-ն տրամադրում է նոր ուղեցույց կամ առկա է դեղամիջոցների նոր կլինիկական ուղեցույց:
- Մենք ավելացնում ենք ջեներիկ դեղամիջոց, որը նոր չէ շուկայում **և**
 - Փոխարինում ենք բրենդային դեղը, որը ներկայումս ներառված է Դեղերի ցանկում **կամ**
 - Փոխում ենք բրենդային դեղի ապահովագրման կանոնները կամ դրա սահմանափակումները:

Երբ այս փոփոխությունները տեղի ունենան, մենք պետք է՝

- Ձեզ առնվազն 30 օր առաջ տեղյակ պահենք՝ նախքան Դեղերի ցանկում փոփոխություն կատարելը **կամ**
- Ձեզ տեղյակ պահենք և տրամադրենք դեղամիջոցը 31 օրվա ընդունման համար, այն բանից հետո, երբ դուք կդիմեք դեղի համալրման համար:

Սա ձեզ ժամանակ կտա խոսելու ձեր բժշկի կամ այլ դեղատոմս նշանակողի հետ: Նա ձեզ կօգնի որոշել՝

- Թե արդյոք Դեղերի ցանկում առկա է նմանատիպ դեղ, որը կարող եք ընդունել նախկինի փոխարեն **կամ**
- Արդյոք արժե պահանջել բացառություն այս փոփոխություններից: Բացառությունների մասին ավելին իմանալու համար տես B10 հարցը:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք duals.anthem.com:

B4. Կա՞ն արդյոք սահմանափակումներ կամ սահմանաչափեր դեղերի ապահովագրման կամ որևէ անհրաժեշտ գործողության հետ կապված, որը պետք է ձեռնարկվի՝ որոշակի դեղեր ստանալու համար:

Այո, որոշ դեղեր ունեն ապահովագրության կանոններ կամ քանակական սահմանափակումներ: Որոշ դեպքերում դուք կամ ձեր բժիշկը կամ ձեզ դեղատոմս նշանակող այլ բուժաշխատող պետք է ինչ-որ գործողություն կատարեք՝ նախքան դեղորայք ստանալը: Օրինակ՝

- **Նախնական համաձայնություն (կամ նախնական թույլտվություն)**՝ Որոշ դեղերի դեպքում դուք, ձեր բժիշկը կամ դեղատոմս նշանակող այլ անձ պետք է նախապես հաստատում ստանաք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից՝ մինչ դեղատոմսը լրացնելը: Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը կարող է չապահովագրել դեղամիջոցը, եթե դուք համաձայնություն չստանաք:
- **Քանակական սահմանափակումներ**՝ Երբեմն Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը սահմանափակում է այն դեղամիջոցի քանակը, որը դուք կարող եք ստանալ:
- **Փուլային թերապիա**. Երբեմն Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը ձեզնից պահանջում է անցնել փուլային թերապիա: Սա նշանակում է, որ դուք ստիպված կլինեք փորձել դեղերը որոշակի հերթականությամբ՝ ըստ ձեր առողջական վիճակի: Հնարավոր է, որ դուք ստիպված լինեք փորձել մի դեղամիջոց՝ մինչև մենք կապահովագրենք մյուսը: Եթե ձեր բժիշկը կարծում է, որ առաջին դեղամիջոցը չի ազդում ձեզ վրա, ապա մենք կփոխհատուցենք երկրորդը:

Ձեր դեղի հետ կապված լրացուցիչ պահանջների կամ սահմանաչափերի վերաբերյալ տեղեկություններ կարող եք գտնել 14-121 էջերում ներկայացված աղյուսակներում: Կարող եք նաև ավելի շատ տեղեկություն ստանալ՝ այցելելով մեր կայք՝ duals.anthem.com: Մենք առցանց տեղադրել ենք այն փաստաթղթերը, որտեղ նկարագրված են մեր նախնական թույլտվության և փուլային թերապիայի սահմանափակումները: Դուք կարող եք նաև դիմել մեզ՝ պատճենը ձեզ ուղարկելու համար:

Կարող եք նաև դիմել այդ սահմանափակումներից բացառություն կիրառելու համար: Սա ձեզ ժամանակ կտա խոսելու ձեր բժշկի կամ այլ դեղատոմս նշանակողի հետ: Նա ձեզ կօգնի որոշել, թե արդյոք Դեղերի ցանկում նմանատիպ դեղ կա, որը կկարողանաք նախկինի փոխարեն ընդունել կամ արժե բացառություն պահանջել: Բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տես B10-B12 հարցերը:

B5. Ինչպե՞ս իմանալ, թե արդյոք ձեր ուզած դեղը սահմանափակումներ ունի կամ արդյոք հարկավոր է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ դեղը ստանալու համար:

Ապահովագրված դեղերի ցանկի 14-րդ էջում ներկայացված է «Անհրաժեշտ գործողություններ, սահմանափակումներ կամ օգտագործման սահմանաչափեր» անվանումով սյունակ:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք duals.anthem.com:

B6. Ի՞նչ տեղի կունենա, եթե փոխենք մեր կանոնները որոշ դեղերի հետ կապված (օրինակ՝ նախնական թույլտվությունը (համաձայնությունը), քանակական սահմանափակումները և/կամ փուլային թերապիայի սահմանափակումները):

Որոշ դեպքերում մենք ձեզ նախապես տեղյակ կպահենք, եթե ավելացում կատարենք կամ փոխենք նախնական հաստատումը, քանակական սահմանափակերը և/կամ դեղի հետ կապված փուլային թերապիայի սահմանափակումները: Տես B3 հարցը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այս նախնական ծանուցման և այն իրավիճակների մասին, երբ հնարավոր է՝ մենք չկարողանանք նախապես ձեզ տեղեկացնել, թե երբ են փոխվում Դեղերի ցանկի հետ կապված մեր կանոնները:

B7. Ինչպե՞ս գտնել դեղը Դեղերի ցանկում:

Դեղը գտնելու երկու եղանակ կա.

- Դուք կարող եք որոնել այբբենական կարգով (եթե գիտեք, թե ինչպես է գրվում տվյալ դեղի անունը), կամ
- Կարող եք որոնել ըստ առողջական վիճակի:

Այբբենական կարգով որոնելու համար՝ անցեք «Ապահովագրված դեղերի ցուցակի» բաժինը: Դուք այն կարող եք գտնել՝ անցնելով 122-րդ էջից սկսվող ցուցակ, այնուհետև ցանկում որոնելով ձեր դեղի անվանումը:

Ըստ առողջական վիճակի որոնելու համար՝ գտեք «Ըստ առողջական վիճակի խմբավորված դեղեր» վերնագրով բաժինը, որը սկսվում է 14-դ էջից: Այս բաժնում դեղամիջոցները խմբավորված են ըստ կատեգորիաների՝ կախված հիվանդության ձևից, որի բուժման համար կիրառվում են: Օրինակ՝ եթե սրտային հիվանդություն ունեք, պետք է նայեք «Cardiovascular agents» (Սրտանոթային դեղամիջոցներ) կատեգորիան: Այստեղ դուք կգտնեք այն դեղերը, որոնք բուժում են սրտային հիվանդությունները:

B8. Ի՞նչ անել, եթե Դեղերի ցանկում չկա ձեր ուզած դեղը:

Եթե դուք չեք գտնում ձեր դեղը Դեղերի ցանկում, զանգահարեք Անդամների դեղատնային սպասարկման բաժին **1-833-214-3606** հեռախոսահամարով (TTY. **711**), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, և հարցրեք: Եթե պարզեք, որ Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը չի փոխհատուցում տվյալ դեղամիջոցը, կարող եք դիմել հետևյալ քայլերից որևէ մեկին.

- Անդամների դեղատնային սպասարկման բաժնից խնդրեք այն դեղերի ցանկը, որոնք ուզում եք ստանալ: Այնուհետև ցանկը ցույց տվեք ձեր բժշկին կամ դեղատոմս նշանակող այլ բուժաշխատողի: Նա կարող է Դեղերի ցանկից ձեր դեղին համարժեք այլ դեղ նշանակել: **Կամ**
- Դուք կարող եք առողջապահական ծրագրին խնդրել բացառություն կատարել ձեր դեղն ապահովագրելու համար: Բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ տես B10 - B12 հարցերը:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք duals.anthem.com:

B9. Ի՞նչ անել, եթե դուք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի նոր անդամ եք և չեք կարող գտնել ձեր դեղը Դեղերի ցանկում կամ այն ստանալու հետ կապված խնդիրներ ունեք:

Մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք ժամանակավորապես ապահովագրել ձեր դեղի 31-օրյա տրամադրումը առաջին 90 օրվա ընթացքում, եթե դուք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի անդամ եք: Սա ձեզ ժամանակ կտա խոսելու ձեր բժշկի կամ այլ դեղատոմս նշանակողի հետ: Նա ձեզ կօգնի որոշել, թե արդյոք Դեղերի ցանկում առկա է նմանատիպ դեղ, որը կարող եք ընդունել նախկինի փոխարեն կամ արդյոք արժե պահանջել բացառություն:

Եթե ձեր դեղատոմսն ավելի քիչ օրերի համար է գրված, մենք թույլ կտանք բազմակի համալրում կատարել՝ մինչև լրանա դեղի առավելագույն՝ 31-օրյա մատակարարումը:

Մենք կապահովագրենք ձեր դեղամիջոցի 31-օրյա մատակարարումը, եթե՝

- դուք ընդունում եք մի դեղ, որը չկա մեր Դեղերի ցանկում, **կամ**
- առողջապահական ծրագրի կանոնները թույլ չեն տալիս ստանալ ձեր բժշկի կողմից նշանակված քանակը, **կամ**
- դեղը պահանջում է նախնական համաձայնություն Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից, **կամ**
- դուք ընդունում դեղամիջոց, որը փուլային թերապիայի սահմանափակումների մի մասն է կազմում:

Եթե դուք գտնվում եք ծերանոցում կամ այլ երկարաժամկետ խնամքի կենտրոնում և ձեզ անհրաժեշտ է այնպիսի դեղամիջոց, որը չկա Դեղերի ցանկում, կամ եթե չեք կարող հեշտությամբ ձեռք բերել ձեզ անհրաժեշտ դեղամիջոցը, մենք կարող ենք օգնել: Եթե դուք ավելի քան 90 օրվա ծրագրում եք ներառված, երկար ժամանակ ապրում եք խնամքի կենտրոնում և անհապաղ դեղի մատակարարման կարիք ունեք.

- Մենք կապահովենք ձեզ անհրաժեշտ դեղամիջոցի 34-օրյա մատակարարումը (բացառությամբ այն դեպքերի, երբ ձեր դեղատոմսում ավելի քիչ օրեր են նշված), անկախ նրանից՝ դուք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի նոր անդամ եք, թե ոչ:
- Սա որպես հավելում ձեր դեղերի մատակարարման առաջին 90 օրվա ընթացքում՝ Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի անդամակցության դեպքում:

Եթե ձեզ մոտ տեղի է ունենում բուժխնամքի մակարդակի փոփոխություն, որը պահանջում է, որպեսզի դուք մեկ հաստատությունից կամ բժշկական հաստատությունից անցնեք մեկ ուրիշին, դուք կարող եք իրավասու լինել մեկ անգամ ժամանակավոր լրացնելու ձեր ներկայիս դեղատոմսը: Օրինակ, եթե դուք դուրս եք գրվել հիվանդանոցից և ձեզ հիվանդանոցի դեղաբանական տեղեկատուի հիման վրա տրվել է դեղերի ցանկ, դուք կարող եք մեկ անգամ համալրել ձեր դեղամիջոցը: Դուք կարող եք ստանալ ժամանակավոր մեկ անգամ դեղամիջոցը համալրելու բացառություն, անկախ նրանից դուք ներառված եք առաջին 90 օրվա ծրագրում, թե ոչ: Մանրամասների համար ձեր դեղատոմս նշանակող բուժաշխատողը թող զանգահարի մեզ:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք duals.anthem.com:

B10. Դուք կարող եք պահանջել բացառություն ձեր դեղը ապահովագրելու համար:

Այո: Դուք կարող եք դիմել Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ին բացառության կարգով փոխհատուցելու Դեղերի ցանկում չընդգրկված դեղը:

Դուք նաև կարող եք խնդրել, որ մենք փոխենք ձեր դեղի կանոնները:

- Օրինակ՝ Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը կարող է սահմանափակել ապահովագրվող դեղամիջոցի քանակը: Եթե ձեր դեղն ունի սահմանաչափ, դուք կարող եք խնդրել, որպեսզի մենք փոխենք դրա սահմանաչափը և ապահովագրենք ավելի շատ քանակություն:
- Այլ օրինակներ՝ Դուք կարող եք դիմել մեզ՝ փուլային թերապիայի սահմանափակումները կամ նախապես հաստատված պահանջները վերացնելու համար:

B11. Ինչպե՞ս դիմել բացառություն ստանալու համար:

Բացառություն խնդրելու համար զանգահարեք Անդամների դեղատնային սպասարկման բաժին: Անդամների դեղատնային սպասարկման բաժնի ներկայացուցիչը կաշխատի ձեր և ձեր բժշկի հետ, որպեսզի օգնի ձեզ բացառություն խնդրել:

Բացառությունների մասին ավելին իմանալու համար կարող եք նաև կարդալ *Անդամի ձեռնարկի* 9-րդ գլուխը:

B12. Որքա՞ն ժամանակ է պահանջվում բացառություն ստանալու համար:

Նախ, մենք պետք է հաստատում ստանանք ձեր դեղ նշանակողի կողմից, որտեղ կբացատրվի, թե ինչու է անհրաժեշտ ձեր նկատմամբ բացառություն կիրառել: Դիմումը ստանալուց հետո՝ 72 ժամվա ընթացքում մենք ձեզ կհայտնենք ձեր բացառության հայտի վերաբերյալ մեր ընդունած որոշման մասին:

Եթե դուք կամ ձեր բժիշկը գտնում եք, որ որոշմանը 72 ժամ սպասելը կարող է վնասել ձեր առողջությանը, կարող եք պահանջել բացառություն կիրառելու վերաբերյալ արագացված որոշում: Սա ավելի արագ որոշման կայացում է: Եթե ձեր դեղ նշանակողը աջակցում է ձեր խնդրանքին, ապա մենք ձեր դեղ նշանակողի հաստատման դիմումը ստանալուց 24 ժամ հետո ձեզ տեղյակ կպահենք մեր որոշման մասին:

B13. Որո՞նք են ջեներիկ (վերարտադրված) դեղերը:

Ջեներիկ դեղամիջոցները պատրաստված են նույն բաղադրիչներից, ինչ բրենդային դեղամիջոցները: Դրանք սովորաբար ավելի էժան են, քան բրենդային դեղերը և դրանց անվանումներն այնքան էլ ծանոթ չեն հանրությանը: Ջեներիկ դեղերը հաստատվում են Food and Drug Administration-ի (FDA, Սննդի և դեղորայքի վերահսկման վարչություն) կողմից:

Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը ապահովագրում է ինչպես բրենդային, այնպես էլ ջեներիկ դեղերը:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք duals.anthem.com:

B14. Ի՞նչ բան է OTC դեղը:

OTC նշանակում է «առանց դեղատոմսի» վաճառվող դեղեր: Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը փոխհատուցում է որոշակի OTC դեղեր, եթե դրանք նշված են ձեր մատակարարի դեղատոմսի մեջ:

Anthem Blue Cross Cal MediConnect Plan Դեղերի ցանկում դուք կարող եք տեսնել, թե որ OTC դեղերն են փոխհատուցվում:

B15. Արդյո՞ք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը փոխհատուցում է ոչ դեղորայքային առանց դեղատոմսի բաց թողնվող (OTC) ապրանքները:

Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը փոխհատուցում է որոշ ոչ դեղորայքային OTC ապրանքները, եթե դրանք նշված են ձեր բժշկի դեղատոմսի մեջ:

Ոչ դեղորայքային OTC արտադրանքների օրինակներ են դիմակները, պահպանակները և պիկֆլուումետրերը:

Դուք կարող եք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի Դեղերի ցանկում տեսնել, թե որ ոչ դեղորայքային OTC ապրանքներն են ապահովագրվում:

B16. Որքա՞ն է ձեր համավճարը:

Որպես Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի անդամ՝ դուք չունեք համավճարներ դեղատոմսային դեղերի և OTC դեղերի համար այնքան ժամանակ, քանի դեռ հետևում եք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կանոններին:

B17. Որո՞նք են դեղերի կարգերը:

Կարգերը Դեղերի ցանկում ներառված դեղերի խմբերն են: Ոչ մի կարգի համար համավճար նախատեսված չէ:

- 1-ին կարգ - Medicare-ի Մաս D-ի նախընտրելի ջեներիկ և բրենդային դեղամիջոցներն են:
- 2-րդ կարգ - Medicare-ի Մաս D-ի նախընտրելի և ոչ նախընտրելի ջեներիկ և բրենդային դեղամիջոցներն են:
- 3-րդ կարգ - Ոչ-Medicare-ի, Medi-Cal-ի նահանգի կողմից հաստատված ջեներիկ և բրենդային դեղամիջոցներն են:
- 4-րդ կարգ - Ոչ-Medicare-ի, Medi-Cal-ի նահանգի կողմից հաստատված առանց դեղատոմսի բաց թողնվող (OTC) դեղամիջոցներն են, որոնց համար պահանջվում է ձեր բժշկի կողմից տրամադրվող դեղատոմս:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք duals.anthem.com:**

C. Ապահովագրված դեղերի ցանկի ամփոփում

Ապահովագրված դեղերի հետևյալ ցանկը ձեզ տեղեկություն է տրամադրում Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից ապահովագրված դեղերի վերաբերյալ: Եթե ձեզ չի հաջողվում գտնել ձեր դեղը ցանկում, ապա կարդացեք Ապահովագրված դեղերի ցուցակը, որը սկսվում է 122-րդ էջից: Ցուցակում այբբենական կարգով նշված են Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ի կողմից փոխհատուցվող բոլոր դեղերը:

Աղյուսակի առաջին սյունակում նշվում է դեղի անվանումը: Բրենդային դեղերը գրված են մեծատառերով (օրինակ՝ SPIRIVA), իսկ ջեներիկ դեղամիջոցները նշված են փոքրատառով և շեղագիր (օրինակ՝ *atenolo*):

«Անհրաժեշտ գործողություններ, սահմանափակումներ կամ օգտագործման սահմանաչափեր» սյունակում ներկայացված են տեղեկություններ այն մասին, թե արդյոք Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը սահմանել է որոշակի կանոններ ձեր դեղն ապահովագրելու համար:

Նշում՝ Դեղին հաջորդող աստղանիշը (*) նշանակում է, որ դեղը «Մաս D դեղորայքի» ցանկից չէ: Ձեզնից չի պահանջվում վճարել որևէ համավճար այս դեղերի համար: Դեղերն ունեն նաև բողոքարկման տարբեր կանոններ:

- *Բողոքարկումը* պաշտոնական միջոց է՝ մեզ խնդրելու համար վերանայել ձեր ապահովագրության վերաբերյալ մեր կայացրած որոշումը և փոխելու այն, եթե կարծում եք, որ մենք որևէ սխալ ենք թույլ տվել: Օրինակ՝ մենք կարող ենք որոշել, որ ձեր ուզած դեղը չի ապահովագրվում կամ այլևս չի փոխհատուցվում Medicare-ի կամ Medi-Cal-ի կողմից:
- Եթե դուք կամ ձեր բժիշկը համաձայն չեք մեր որոշման հետ, կարող եք այն բողոքարկել: Հարցեր ունենալու դեպքում զանգահարեք Անդամների դեղատնային սպասարկման բաժին **1-833-214-3606** հեռախոսահամարով (TTY. 711), **օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:** Կարող եք նաև կարդալ *Անդամի ձեռնարկի* 9-րդ գլուխը՝ տեղեկանալու համար, թե ինչպես որոշումը բողոքարկել:



Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Anthem Blue Cross Cal MediConnect Plan՝ 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք duals.anthem.com:

C1. Ըստ առողջական վիճակի խմբավորված դեղեր

Այս բաժնում դեղամիջոցները խմբավորված են ըստ կատեգորիաների՝ կախված հիվանդության ձևից, որի բուժման համար կիրառվում են: Օրինակ՝ եթե սրտային հիվանդություն ունեք, պետք է նայեք «Cardiovascular agents» (Սրտանոթային դեղամիջոցներ) կատեգորիան: Այստեղ դուք կգտնեք այն դեղերը, որոնք բուժում են սրտային հիվանդությունները:

«Անհրաժեշտ գործողություններ, սահմանափակումներ կամ օգտագործման սահմանաչափեր» սյունակում օգտագործված կոդերի նշանակությունները՝

ՀԱՊԱՎՈՒՄ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
B/D PAR	Մաս B-ի և Մաս D-ի սահմանումը	Այս դեղատոմսային դեղը կարող է փոխհատուցվել Medicare-ի Մաս B-ի կամ D-ի շրջանակներում՝ կախված հանգամանքներից: Որոշում կայացնելու համար կարող է պահանջվի ներկայացնել տեղեկատվություն, որտեղ նկարագրված է դեղի օգտագործումն ու նպատակը:
LA	Սահմանափակ քանակություն	Այս դեղատոմսը կարող է հասանելի լինել միայն որոշակի դեղատներում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների դեղատնային սպասարկման բաժին 1-833-214-3606 հեռախոսահամարով (TTY. 711) օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
MO	Փոստային պատվերով դեղեր	Այս դեղատոմսային դեղը հասանելի է փոստային պատվերով ծառայության, ինչպես նաև մեր մանրածախ ցանցային դեղատների միջոցով: Երկարատև օգտագործման (պահպանողական բուժման) դեղամիջոցների համար (օրինակ՝ արյան բարձր ճնշման համար կիրառվող) փորձեք օգտվել փոստային պատվերից: Մանրածախ ցանցային դեղատները կարող են ավելի հարմար լինել կարճաժամկետ օգտագործման դեղամիջոցների համար (օրինակ՝ հակաբիոտիկների համար):
NE	Չերկարաձգված	Առանց մատակարարման օրվա երկարաձգման դեղերի մեջ մտնում են հատուկ ցուցակի դեղերը: Հատուկ ցուցակի դեղերը լրացվում են 31-օրյա մատակարարմամբ:
PAR	Պահանջված նախնական թույլտվություն	Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը պահանջում է, որպեսզի դուք կամ ձեր բժիշկը որոշակի դեղերի համար ստանաք նախնական թույլտվություն: Դա նշանակում է, որ դուք պետք է ստանաք հաստատում՝ նախքան ձեր դեղատոմսը լրացնելը: Եթե դուք չստանաք հաստատում, մենք կարող ենք չփոխհատուցել դեղամիջոցը:
QLL	Քանակական սահմանափակումներ	Որոշ դեղերի համար Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը սահմանափակում է մեր կողմից ապահովագրվող դեղերի քանակը:
ST	Փուլային թերապիա:	Որոշ դեպքերում, Anthem Blue Cross Cal MediConnect Plan-ը պահանջում է ձեր հիվանդությունը բուժելու համար առաջին հերթին փորձել որոշակի դեղեր՝ նախքան մենք ձեզ համար կապահովագրենք մեկ ուրիշ դեղ: Օրինակ՝ եթե A դեղամիջոցը և B դեղամիջոցը բուժում են նույն հիվանդությունը, մենք կարող ենք չփոխհատուցել B դեղամիջոցը՝ մինչև դուք չփորձեք A դեղամիջոցը: Եթե A դեղամիջոցը չի ազդում ձեզ վրա, մենք կփոխհատուցենք B դեղամիջոցը:

Այս աղյուսակի նշանների և հապավումների նշանակությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար անցեք Պայմանական նշաններ՝ էջ համար 14: